23
ՆՈՅԵՄԲԵՐԻ
2022

Luys Լույս®

ԷՐԴՈՂԱՆՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՆՈՐԴ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԷՐԴՈՂԱՆՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՆՈՐԴ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հեղինակ՝ Միքայել Բադալյան

Հոդվածը պատրաստվել է «Լույս» հիմնադրամի փորձագետների աջակցությամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ ՏԱՐԲԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2

1.1. Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության գլխավոր միջնորդը դառնալու Անկարայի փորձերը 3

1.2. Թուրքիայի միջնորդական ջանքերը Տաջիկստան-Ղրղզստան հակամարտության շրջանակներում 7

2. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՝ ՈՐՊԵՍ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾԻՔ 9

2.1. Սիրիա. Աստանայի ձևաչափ 10

2.2. Լիբիա. մարշալ Հավթարի և կառավարության միջև միջնորդության փորձերը 13

2.3. Իսրայելի ու Պաղեստինի միջև մանևրելու և միջնորդության փորձերը 15

3. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 17

3.1. Թուրքիայի դերը և անաչառ միջնորդության անհնարինությունը ԵԱՀԿ Մինսկի խմբում 17

3.2. Ռիսկերը՝ կապված Արցախյան և հայ-ադրբեջանական սահմանային հակամարտության շրջանակներում Թուրքիայի «ուժային միջնորդության» հեռանկարի հետ 19

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհը թևակոխել է միջազգային հարաբերությունների, հակամարտությունների և աշխարհաքաղաքական բուռն զարգացումների նոր և լարված փուլ: Փորձելով ներգրավվել այլ պետությունների միջև միջազգային հարաբերությունների տարբեր գործընթացներում՝ Թուրքիան ձգտում է համաշխարհային բնույթի ազդեցության: Մի շարք ներքաղաքական խնդիրներ լուծելուց բացի, միջազգային հարաբերություններում ստանձնելով միջնորդի դերակատարում, Թուրքիան հանդես է գալիս որպես գլոբալ ազդեցության կենտրոն, ինչն իրեն ավելի մեծ ինքնավարություն է տալիս այնպիսի հեգեմոններից, ինչպիսիք են ԱՄՆ-ն և Ռուսաստանը: Բացի միջազգային հարթակներում Թուրքիայի դերն ամրապնդելուց, այս մարտավարությունը հաճախ օգտագործվում է Էրդողանի վարչակազմի և «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) դիրքերը երկրում ամրապնդելու համար: Մի շարք հետազոտողներ պնդում են, որ սա նաև պահպանողական և ազգայնական ընտրազանգվածին Էրդողանի շուրջ համախմբելու միջոց է, հատկապես Թուրքիայում 2023-ին սպասվող նախագահական ընտրությունների համատեքստում[1]:

Սույն հետազոտությունը ուսումնասիրում է Թուրքիայի արտաքին հարաբերությունների վերոհիշյալ ռազմավարությունը՝ ի ցույց դնելով վերջինիս խաղունակությունը մի շարք միջազգային հակամարտություններում և միջազգային բնույթ կրող այլ հարաբերություններում: Ուսումնասիրությունները ներառում են միջազգային հակամարտությունները մի շարք աշխարհամասերում, ներառյալ Հարավային Կովկասում՝ դիտարկելով Արցախի հիմնախնդրի և հայ-ադրբեջանական սահմանի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները թուրքական միջնորդական ռազմավարության համատեքստում: Նկատի ունենալով վերը նշված հանգամանքները՝ հետազոտությունը փորձում է պատասխանել հետևյալ հիմնական հարցին՝ *ինչպե՞ս է Թուրքիան ստեղծում կախվածություն իր նկատմամբ՝ այլ պետությունների միջպետական հարաբերություններում ստանձնելով միջնորդի դեր:*

[1] Ayca Arkilic (2021) Turkish Populist Nationalism in Transnational Space: Explaining Diaspora Voting Behaviour in Homeland Elections, Journal of Balkan and Near Eastern Studies, 23:4, 586-605, from https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/19448953.2021.1888599 (այցելվել է 14.11.2022թ.)

1. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ ՏԱՐԲԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ջոն Միրշայմերը պնդում է, որ Ուկրաինայում արագ փոփոխվող ռազմական իրավիճակին զուգընթաց, փոխվում են նաև աշխարհակարգը և ուժային հավասարակշռությունը գլոբալ առումով՝ մեծացնելով անկանխատեսելիությունը պետությունների միջև հարաբերություններում: Հեգեմոն կայունության նվազումը մեծապես ազդում է նաև այն երկրների վրա, որոնք ավելի շատ կախված են այդ գերիշխող պետություններից: Այս հետազոտությունը հատուկ ուշադրություն է դարձնում Ուկրաինայում շարունակվող հակամարտությանը՝ հատկապես հաշվի առնելով Ռուսաստանի ներգրավվածությունը: Այս թեման նման ուշադրություն է պահանջում ոչ միայն Ռուսաստանի՝ որպես հեգեմոն իր գլոբալ դերի համար, այլ նաև որպես Հայաստանի ռազմավարական դաշնակցի: Ռուսաստանի և Հայաստանի միջև այս հարաբերությունների պատճառով հակամարտության ցանկացած ելք անխուսափելիորեն կազդի հայկական պետության կայունության վրա: Հայաստանի համար հարցի կարևորությունն էլ ավելի արդիական է դառնում՝ հաշվի առնելով հակամարտությունում Թուրքիայի դերը: Նկատի ունենալով այն, որ Թուրքիան և Ադրբեջանը Հայաստանի և Արցախի հետ հարաբերություններում հանդես են գալիս մեկ ճակատով, միջազգային մակարդակով Թուրքիայի և էրդողանյան վարչակազմի դիրքերի ցանկացած ուժեղացում չի կարող հետևանք չթողնել Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և տարածաշրջանի այլ երկրների միջև գործընթացների վրա:[2]

Հետխորհրդային տարածաշրջանում Թուրքիայի միջնորդական դերակատարության մեկ այլ օրինակ է Տաջիկստանի և Ղրղզստանի միջև հակամարտության շրջանակներում Թուրքիայի դիվանագիտական ներգրավվածությունը: Այս համատեքստում կարևոր է նշել նաև Հայաստանի հարաբերություններն այս պետությունների հետ: Օրինակ՝ և՛ Տաջիկստանը, և՛ Ղրղզստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամներ են, իսկ վերջինս համարվում է անվտանգության կարևոր բաղադրիչ՝ Հայաստանի ազգային անվտանգության համատեքստում: Կարելի է պնդել, որ Ռուսաստանի շուրջ ավելի կայուն ժամանակաշրջանում Թուրքիան ավելի

[2] Mearsheimer, J. J. (2022, June 25). The causes and consequences of the Ukraine crisis. The National Interest. Retrieved October 28, 2022, from https://nationalinterest.org/feature/causes-and-consequences-ukraine-crisis-203182?page=0%2C3 (այցելվել է 14.11.2022թ.)

պասիվ է եղել այդ պետությունների նկատմամբ իր դիվանագիտական միջնորդության հաստատման հարցում: Այնուամենայնիվ, Ռուսաստանի շուրջ անկայունության շարունակական աճի և Ուկրաինայում նրա հետաքրքրությունների կենտրոնացման պայմաններում Թուրքիան ստացել է հնարավորության պատուհան՝ տարածաշրջանում և այս պետությունների նկատմամբ իր ազդեցությունն ընդլայնելու համար: Հաշվի առնելով վերոհիշյալ իրողությունները՝ չի կարելի անտեսել այն պոտենցիալ ռիսկերը, որոնք կարող են առաջանալ Հայաստանի և Արցախի համար:

1.1. Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության գլխավոր միջնորդը դառնալու Անկարայի փորձերը

Կարելի է պնդել, որ Թուրքիայի համար ռուս-ուկրաինական, իսկ ավելի լայն համատեքստում՝ Արևմուտք-ՌԴ հակամարտության մեջ միջնորդ դառնալու հիմնական պատճառներից մեկը չեզոք երևալու ձգտումն է: Այնուամենայնիվ, Թուրքիան ներգրավված է մի շարք միակողմանի պայմանավորվածությունների և գործողությունների մեջ, ինչպիսիք էին, օրինակ, Կիևին մարտական անօդաչու թռչող սարքեր մատակարարելը կամ Մոսկվայի դեմ արևմուտքի կողմից սահմանվող պատժամիջոցներ կիրառելուց խուսափելը: Տրամաբանական է, որ Էրդողանը կցանկանա խուսափել Ռուսաստանի պատասխան գործողությունների զոհը դառնալուց, ինչպես նաև հավաքական արևմուտքի տնտեսական պատժամիջոցներից՝ հատկապես հաշվի առնելով նաև Թուրքիայի տնտեսական ծանր իրավիճակը: Հատկանշական է, որ և՛ Ռուսաստանը, և՛ Ուկրաինան պատերազմի ընթացքում նույնպես շատ ավելի զգայուն են իրենց տնտեսությունների վրա ազդող գործոնների նկատմամբ: Այս առումով Թուրքիան ունի մեծ դերակատարում: Ռուսաստանը և Թուրքիան տնտեսական գործընկերներ են մի շարք ոլորտներում, այդ թվում՝ էներգետիկայի և զբոսաշրջության: Ուկրաինայի համար Թուրքիան ոչ միայն կարևոր տնտեսական գործընկեր է, այլև զենքի մատակարար: Այս գործարքները ձեռնտու են Թուրքիային և անհրաժեշտ՝ Ուկրաինային: Հաշվի առնելով ռուս-ուկրաինական հակամարտության մեջ ակտիվորեն ներգրավված լինելու վերոհիշյալ պատճառները՝ հետազոտության այս բաժինը կներկայացնի այն մեթոդները, որոնք թուրքական կառավարությունն օգտագործել է միջնորդի դերը ստանձնելու և այդ դերն ամրապնդելու ուղղությամբ:

Թուրքիայի դիվանագիտության այս մեխանիզմի դրսևորման առաջին դրվագներից մեկը ռուս-ուկրաինական հակամարտության շրջանակներում էրդողանյան վարչակարգի ջանքերն են՝ սևծովյան հացահատիկի

բեռնաշրջանառման շրջափակումը թուլացնելու ուղղությամբ:[3] Մասնավորապես, Ռուսաստանը և Ուկրաինան մատակարարում են ցորենի համաշխարհային արտահանման 29 տոկոսը, եգիպտացորենի արտահանման 20 տոկոսը և արևածաղկի ձեթի 80 տոկոսը:[4] Ռուսական զորքերի՝ դեպի Ուկրաինայի սևծովյան նավահանգիստներ առաջխաղացմամբ, արտահանման հիմնական կետերը փակվեցին՝ խափանելով ուկրաինական պարենի արտահանման գործընթացը: Այդ առիթով Ռուսաստանի և Ուկրաինայի ներկայացուցիչները 2022 թվականի հուլիսի 13-ին հրավիրվել էին Ստամբուլ՝ բանակցելու ուկրաինական սևծովյան նավահանգիստներից սննդի փոխադրման համար անվտանգ ճանապարհ ապահովելու շուրջ: Այս բանակցությունների առիթով թուրքական կառավարությունը նաև առաջ է քաշում Ստամբուլում ուկրաինական հացահատիկի կենտրոնի ստեղծման առաջարկը[5]: Վերջինիս ստեղծմանը կողմ են արտահայտվել ոչ միայն Ռուսաստանը և Ուկրաինան, այլև Միավորված ազգերի կազմակերպությունը, ինչն ավելի է լեգիտիմացնում կենտրոնի գործունեությունը: Հարկ է նշել, որ այս կենտրոնը, ըստ էության, մեկ այլ համագործակցության հարթակ է, որտեղ Թուրքիան ակամայից ստանձնում է միջնորդի դերակատարում՝ ստեղծելով որոշակի կախում թուրքական գործոնից:[6]

Միջնորդության ռազմավարության արդյունավետությունը ռուս-ուկրաինական հակամարտության շրջանակներում ապացուցվում է այս բանակցությունների զարգացումներով: Մասնավորապես, հոկտեմբեր ամսվա վերջին Ռուսաստանյան ղեկավարությունը որոշում է կայացնում դադարեցնել իր մասնակցությունը հացահատիկի արտահանման համաձայնության շրջանակներում՝ դժվարություններ

[3] Murphy, M. (2022, August 2). Ukraine War: Deal in sight to end Ukrainian grain blockade - Turkey. BBC News. Retrieved October 8, 2022, from https://www.bbc.com/news/world-europe-62159804 (այցելվել է 14.11.2022թ.)

[4] Fellmann, T., Hélaine, S. & Nekhay, O. Harvest failures, temporary export restrictions and global food security: the example of limited grain exports from Russia, Ukraine and Kazakhstan. Food Sec. 6, 727–742 (2014). https://doi.org/10.1007/s12571-014-0372-2 (այցելվել է 14.11.2022թ.)

[5] United Nations (2022, July 23) UN welcomes New Centre to put Ukraine grain exports deal into motion. UN news. Retrieved October 9, 2022, from https://news.un.org/en/story/2022/07/1123532 (այցելվել է 14.11.2022թ.)

[6] Guardian News and Media. (2022, July 14). Turkey announces deal with Ukraine, Russia and UN aimed at resuming grain exports. The Guardian. Retrieved October 28, 2022, from https://www.theguardian.com/world/2022/jul/14/turkey-announces-deal-with-ukraine-russia-and-un-aimed-at-resuming-grain-exports (այցելվել է 14.11.2022թ.)

ստեղծելով ուկրաինական հացահատիկի արտահանման համար:[7] Այնուամենայնիվ, Թուրքիան, լինելով համաձայնության միջնորդ կողմ և համաձայնության մոնիթորինգի կենտրոնի մասնակից երկիր, հնարավորություն է ունենում շարունակել հացահատիկի արտահանումը այս տարածքից, չնայած Ռուսաստանի որոշմանը: Վերջինս հացահատիկի արտահանման համաձայնության ձևաչափին ռուսական կողմի վերադարձի շարժառիթ է հանդիսանում:[8] Այսպիսով նկատելի է, որ թուրքական կողմն արդեն իսկ ստացել է բարենպաստ պայմաններ տարածաշրջանում՝ նվազագույնը տնտեսական բնույթի մեծ ազդեցություն ունենալու համար, ինչը ստիպում է այլ գլոբալ ուժերի հաշվի նստել թուրքական գործոնի հետ:

Թուրքական նախաձեռնողականության մեկ այլ օրինակ է ռուսական և ուկրաինական կողմերին «Անթալիայի դիվանագիտական ֆորումում» բանակցություններ վարելու հրավերը[9]: Հրավերը պաշտոնապես արվել էր Մևլյութ Չավուշօղլուի կողմից՝ Ռուսաստանի և Ուկրաինայի արտաքին գործերի նախարարներ Սերգեյ Լավրովին և Դմիտրի Կուլեբային: Հակամարտության սկզբից ի վեր՝ սա կողմերի առաջին շփումներից էր, որտեղ հանդիպեցին երկրների արտաքին գործերի նախարարները: Չնայած այս բանակցությունների շրջանակներում պայմանավորվածությունների սղությանը՝ կողմերն այնուամենայնիվ պայմանավորվեցին շարունակական բնույթ տալ նման հանդիպումներին: Ըստ Արկիլիքի՝ միջազգային մամուլում Թուրքիայի արտգործնախարարության գործոնի ակտիվ լուսաբանումը նմանօրինակ միջպետական հանդիպումների կայացման մեջ փորձ է հանդիսանում ավելի բարելավելու Թուրքիայի կառավարության նկատմամբ հանրային կարծիքը՝ ինչպես Թուրքիայում, այնպես էլ միջազգայնորեն:[10]

---

[7] BBC. (2022, November 1). Ukraine war: Grain deal continues despite Russia pull-out. BBC News. Retrieved November 14, 2022, from https://www.bbc.com/news/world-europe-63467042 (այցելվել է 14.11.2022թ.)

[8] Kirby, P. (2022, November 2). Russian U-turn allows grain deal to resume. BBC News. Retrieved November 13, 2022, from https://www.bbc.com/news/world-europe-63483133 (այցելվել է 14.11.2022թ.)

[9] BBC. (n.d.). Переговоры Лаврова и Кулебы в турции: зачем они были нужны и чего ждут эксперты. BBC News Русская служба. Retrieved October 9, 2022, from https://www.bbc.com/russian/news-60707095 (այցելվել է 14.11.2022թ.)

[10] Ayca Arkilic (2021) Turkish Populist Nationalism in Transnational Space: Explaining Diaspora Voting Behaviour in Homeland Elections, Journal of Balkan and Near Eastern Studies, 23:4, 586-605, from https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/19448953.2021.1888599 (այցելվել է 14.11.2022թ.)

Ռուս-ուկրաինական հակամարտության համատեքստում, այս հետազոտության մեջ բերվող վերջին օրինակը Թուրքիայի կողմից միջնորդված թվով 200 ռազմագերիների փոխանակումն է հակամարտող պետությունների միջև: Հատկանշական է այն, որ այս լուրն առաջինը հանրայնացրեց Էրդողանը՝ ամերիկյան հեռուստաընկերությանը տված իր հարցազրույցում, նշելով, որ օգնել է կողմերին վերջնական պայմանավորվածության հասնել Ուզբեկստանում ընթացող տարածաշրջանային գագաթնաժողովի շրջանակներում[11]: Նկատի ունենալով մամուլի կողմից Էրդողանի անձի կարևորումը այս գործընթացում, ինչպես նաև Արկիլիքի հետազոտությունը՝ կարելի է պնդել, որ այս դրվագը ծառայում է ոչ միայն որպես Թուրքիայի դիրքերը դիվանագիտորեն ամրացնելու միջոց, այլև կարևոր գործոն է Էրդողանի պոպուլիստական նկրտումների տեսանկյունից:[12]

Այսպիսով, նկատելի է, թե ինչպես է Թուրքիային հաջողվել հակամարտությունն սկսվելուց ի վեր սահմանել իր ինքնուրույն դերակատարումը՝ որպես կարևոր միջնորդ: Ավելին, պատերազմական գործողությունների ընթացքում, էրդողանյան վարչակարգին հաջողվել է ստեղծել հետագա համագործակցության ֆորմատներ և նախատիպեր, որոնք կարող են հիմք դառնալ հակամարտության տարբեր դրվագներում թուրքական կողմի հետագա ներգրավման համար:

Հարկ է շեշտել, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության նման ռազմավարությունը թույլ է տալիս դրսևորել ճկունություն՝ միջազգային հարաբերություններում պետության համար նպաստավոր դիրք ապահովելու հարցում: Մասնավորապես, եթե ռուս-ուկրաինական հակամարտության շրջանակներում միջնորդի դերն օգտագործվել է որպես չեզոք դերակատար լինելու և դեռևս մեծապես միայն դիվանագիտական ներգրավման միջոց, ապա մերձավորարևելյան կամ հայ-ադրբեջանական հակամարտություններում թուրքական արտաքին քաղաքականության սույն ռազմավարությունը որոշ դեպքերում

[11] Al Arabiya English. (2022, September 20). Russia, Ukraine agree to exchange 200 prisoners, says Erdogan. Al Arabiya English. Retrieved October 10, 2022, from https://english.alarabiya.net/News/world/2022/09/20/Russia-Ukraine-agree-to-exchange-200-prisoners-says-Erdogan (այցելվել է 14.11.2022թ.)

[12] Ayca Arkilic (2021) Turkish Populist Nationalism in Transnational Space: Explaining Diaspora Voting Behaviour in Homeland Elections, Journal of Balkan and Near Eastern Studies, 23:4, 586-605, from https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/19448953.2021.1888599 (այցելվել է 14.11.2022թ.)

պատուհաններ է բացում ռազմաքաղաքական կամ այլ ակտիվ միջամտությունների համար:

Հաջորդ բաժիններում հետազոտությունը նկարագրում է Թուրքիայի ակտիվ դերակատարումը այլ պետությունների միջև հարաբերությունների կառուցման կամ փոփոխության գործում: Հատկանշական է, որ Թուրքիան, նման միջամտություններ իրագործելիս, շատ հաճախ հենվում է իր և այլ պետությունների միջև ոչ միայն ռազմավարական և անվտանգային, այլև կրոնական, ազգային, մշակութային և այլ նմանությունների վրա, ներկայացնելով իրեն իբրև եղբայրական պետություն, որի միջնորդական դերը ձեռնտու է բոլոր կողմերին կամ կողմերից մեկին: Բացառություն չէ նաև ռուս-ուկրաինական հակամարտությունը, որտեղ Էրդողանի վարչակազմը ակտիվորեն խաղարկում է Ղրիմի թաթարների հարցը:

1.2. Թուրքիայի միջնորդական ջանքերը Տաջիկստան-Ղրղզստան հակամարտության շրջանակներում

Քորնել Սվանթեի խոսքով, թուրքական պետության ներգրավվածությունը Տաջիկստանի և Ղրղզստանի միջև հարաբերություններում հիմնականում կողմերին ռազմական օգնության տեսքով է: Այս համագործակցության էությունն այն է, որ չնայած հակամարտության երկու կողմերին թուրքական արտադրության սպառազինություն մատակարարելուն, Թուրքիան դեռևս կարողանում է հանդես գալ որպես այս երկու պետությունների միջև հակամարտությունների կարգավորման գործընկերներից մեկը և նշանավոր երրորդ կողմը:[13] Փոլ Ֆրայոլին պնդում է, որ Կենտրոնական Ասիայի երկրների մեծամասնության ղեկավարությունը զերծ է մնում Թուրքիային որպես ագրեսիային նպաստող կողմ ներկայացնելուց, հակառակը՝ գրեթե միշտ ներկայացվում է որպես միջնորդ Կենտրոնական Ասիայի թյուրք և մահմեդական ազգերի միջև: Սա բացատրելու համար Ֆրայոլին պնդում է, որ չնայած ներկայիս արտաքին քաղաքական ակտիվությանը՝ Թուրքիան 2000-ականների սկզբից դիվանագիտական իր լծակների հիմքը ներդրել է այս տարածաշրջանում:

[13] Svante E. Cornell (2003) Regional Politics in Central Asia: the Changing Roles of Iran, Turkey, Pakistan and China, India and Central Asia: Building Linkages in an Age of Turbulence, New Delhi: SAPRA Foundation, https://www.isdp.eu/content/uploads/images/stories/isdp-main-pdf/2004_cornell_regional-politics-in-central-asia.pdf (այցելվել է 14.11.2022թ.)

Թուրքիայի ազդեցությունը մեծացնելու առաջին փորձեր արվեցին Խորհրդային Միության փլուզումից հետո:[14]

Այս ժամանակաշրջանում թուրքական կողմը նպաստեց տնտեսական, դիվանագիտական և ռազմական համագործակցությանը հատկապես Տաջիկստանում և Ղրղզստանում: 2007 թվականին Թուրքիան այս երկու երկրների հետ սկսում է ռազմամթերքի մատակարարման նոր փուլ, ինչպես նաև անցկացնում տարատեսակ ռազմական վերապատրաստման միջոցառումներ այս երկրների զինված ուժերի հետ: Թուրքիան սա ներկայացնում է որպես նախապատրաստում՝ պետությունների ներսում ապստամբական տրամադրությունները կասեցնելու նպատակով: Թուրքիայի ներգրավվմամբ նմանօրինակ աննախադեպ վերապատրաստական միջոցառումներ կատարվեցին նաև դատական, տնտեսական, իրավական և այլ ոլորտներում:[15]

Թուրքիային հաջողվեց էապես մեծացնել իր ներգրավվածության մասշտաբները ԱՄՆ-ում 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո, ինչը մեծացրեց հետաքրքրությունը Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ: Հատուկ ուշադրության տակ էին Ուզբեկստանը և Ղրղզստանը, որոնք, ի լրումն մահմեդական կողմնորոշման, ունեին տնտեսական համագործակցության ներուժ: Այստեղ հեղինակներն ընդգծում են թուրքական հավակնությունների դրսևորումը ԱՄՆ-ի ազգային անվտանգությանը սպառնացող վտանգի պայմաններում տարածաշրջանում միջամտելու ունակության միջոցով: Մասնավորապես, Թուրքիան կարողացավ միջնորդ հանդիսանալ ԱՄՆ-ի և Միջին Ասիայի երկրների միջև: Այս համատեքստում ԱՄՆ-ը սատարեց Թուրքիայի ակտիվությունը տարածաշրջանում՝ հանուն այնտեղ ՆԱՏՕ-ի դաշնակից երկրի ներգրավվածության և ԱՄՆ-ի նկատմամբ արտաքին քաղաքական վարքագծի կանխատեսելիության բարձրացման:

Այսպիսով, առկա է տեսակետ, որ թուրքական միջնորդական գործոնի հիմքերը ներդրվում են վաղաժամ և հակամարտությունների ժամանակ արդեն իսկ թույլ են տալիս ավելի նպաստավոր դիրքերից մտնել բանակցությունների մեջ: Հարկ է նշել, որ թիրախային ոլորտները այս հիմքերը ներդնելու համար ինչպես Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության շրջանակներում, այնպես էլ Ղրղզստան-Տաջիկստան

[14] Paul Frayoli (2021). Turkey's Central Asia Policy. Strategic Comments, IIIS , https://doi.org/10.1080/13567888.2021.1934252 (այցելվել է 14.11.2022թ.)
[15] Thomas Wheeler (2013) Turkey's role and interests in Central Asia, Saferworld, file:///C:/Users/USER/Downloads/turkeys-role-and-interests-in-central-asia.pdf (այցելվել է 14.11.2022թ.)

հակամարտության համատեքստում եղել են ռազմավարական կարևոր նշանակության: Մասնավորապես, Թուրքիան նախօրոք ամրացնում է դիրքերը ռազմական, տնտեսական, առևտրաշրջանառության և այլ ոլոտներում: Թուրքիային հաջողվել է դառնալ այս երկրներից մի քանիսի համար ռազմարդյունաբերության ոլորտում կարևոր մատակարարներից մեկը: Սա ամրապնդում է վերը նշված տեսակետներից մեկը, ըստ որի՝ Թուրքիան փորձում է համագործակցել երկրների ազգային անվտանգության կարևորագույն ոլորտներում՝ իր դերը ստանալով անվտանգային ընդհանուր համակարգում և ակամայից ստեղծելով կախում թուրքական գործոնից:

2. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾԻՔ

«Թուրքական հետազոտություններ» ամսագրում ներկայացված վերլուծության համաձայն՝ Թուրքիան Մերձավոր Արևելքում արտաքին քաղաքականության մեջ իր միջնորդական քաղաքականությունն ավելի ակտիվորեն և ազատ է դրսևորվել՝ համեմատած այլ տարածաշրջանների հետ, որոնցում Թուրքիան ունեցել է նմանօրինակ արտաքին քաղաքական գործելաոճ: Լինելով առաջին տարածաշրջաններից մեկը, որտեղ մուտք գործեց թուրքական արտաքին քաղաքականության նոր ոճը ԱԶԿ-ի վարչակազմի ներքո, Մերձավոր Արևելքը հանդիսանում է քննարկման կարևոր առարկա:[16] Այս նույն ամսագրի հեղինակներ Ալտունիշիկն ու Մարտինը, պնդում են, որ Մերձավոր Արևելքում արտաքին քաղաքականության թուրքական միջնորդական ոճի փորձը Էրդողանի վարչակազմին տրամադրել է բավարար ռեսուրս և գիտելիք՝ ընդլայնելու իրենց միջնորդական մարտավարությունն աշխարհի այլ մասերում: Մերձավոր Արևելքի օրինակը հետաքրքիր է նաև նրանով, որ ըստ հեղինակների՝ վերջինս ամենաբարձր թուրքական ռազմական ակտիվություն ունեցող տարածաշրջանն է՝ ուղեկցվող

[16] Meliha B. Altunişik & Lenore G. Martin (2011) Making Sense of Turkish Foreign Policy in the Middle East under AKP, Turkish Studies, 12:4, 569-587, https://www.tandfonline.com/doi/full/10.1080/14683849.2011.622513 (այցելվել է 14.11.2022թ.)

Էրդողանի վարչակազմի դիվանագիտական միջնորդության պրակտիկայով:[17] Կարելի է նաև ենթադրել, որ այս տարածաշրջանում, հաճախ ռազմական ակտիվությունը ծառայել է որպես գործիք Թուրքիայի արտաքին քաղաքականության գերատեսչությունների համար ցանկալի միջնորդական դերի հաստատման գործում:

Հետազոտության առաջին գլուխը նվիրված է ներկայումս տեղի ունեցող՝ միջազգային բնույթ կրող իրադարձություններին՝ հասկանալու համար, թե ինչպիսի դեր է փորձում ստանձնել Թուրքիան այդ հակամարտությունների համատեքստում, և ինչպիսի մարտահրավերների կարող են բախվել հայկական երկու պետությունները Թուրքիայի նմանօրինակ դիրքավորման արդյունքում: Ի լրումն առաջին հատվածին՝ հետազոտության երկրորդ գլուխը կենտրոնանում է Թուրքիայի կողմից նախկինում կիրառված դիվանագիտական միջնորդության ռազմավարության օրինակներին Մերձավոր Արևելքում: Վերջինիս նպատակն է Հայաստանի և Արցախի հետ հարաբերություններում այդ մարտավարության արդեն իրականացված և հեռանկարում իրականացվելիք դեպքերին զուգահեռներ տանելը:

2.1. Սիրիա. Աստանայի ձևաչափ

Թուրքիայի արձագանքը սիրիական ճգնաժամին ի սկզբանե միանշանակ չի եղել և կրել է կարևոր փոփոխություններ: Մերձավոր Արևելքում, «Մուսուլման եղբայրների» հետ մեկտեղ, Էրդողանի կառավարությունը չէր կարող հանդուրժել Սիրիայի իշխանությունների կողմից սուննի բնակչության ազդեցության սահմանափակումը: Թուրքիան աստիճանաբար դառնում է կարևոր ռազմական գործընկեր սիրիական ընդդիմության համար: Մեկ այլ կարևոր հանգամանք էր քուրդ փոքրամասնության հզորացումը Սիրիայի հյուսիսում և հյուսիս-արևելքում: Ունենալով լրջագույն խնդիրներ Քրդստանի աշխատավորական կուսակցության հետ՝ էրդողանյան վարչակարգի տեսանկյունից՝ քրդական ուժերի հզորացումը Իրաքում և Սիրիայում անհանդուրժելի էր: Ռաբինովիչն իր աշխատության մեջ գրում է, որ Թուրքիայի մասնակցությունը սիրիական քաղաքացիական պատերազմին սկսվել է դիվանագիտական և փափուկ ուժի կիրառման ճանապարհով, իսկ ավելի ուշ՝

[17] Meliha B. Altunişik & Lenore G. Martin (2011) Making Sense of Turkish Foreign Policy in the Middle East under AKP, Turkish Studies, 12:4, 569-587, https://www.tandfonline.com/doi/full/10.1080/14683849.2011.622513 (այցելվել է 14.11.2022թ.)

վերածվել է ռազմական միջամտության:[18] Կոնֆլիկտի համատեքստում ռազմական գործողություններն ավարտելու պատրվակով, 2016 թվականին ստեղծվում է Աստանայի բանակցային հարթակը Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի միջև:[19] Հաշվի առնելով այս հետազոտության ուշադրությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության շուրջ՝ ստորև ներկայացված են բանակցությունների ընթացքում ձեռք բերված և Թուրքիայի միջնորդական նշանակությունը մեծացնող որոշումները:

Բանակցությունների առաջին փուլի արդյունքում երաշխավոր երկրները պայմանավորվում են ստեղծել Սիրիայում հրադադարի ռեժիմի վերահսկման եռակողմ մեխանիզմ: 2017 թվականի փետրվարին Աստանայի երկրորդ հանդիպման արդյունքում ստեղծվում է հրադադարի մոնիթորինգի նպատակով ՄԱԿ-ի համատեղ աշխատանքային խումբ, պատրաստվում է ռազմական գործողություններին վերաբերող տարածքների մասին կանոնակարգի նախագիծ, ինչպես նաև ձևակերպվում է գերիների փոխանակման ֆորմատը: Երրորդ հանդիպումը նշանավոր էր նրանով, որ ստեղծվում են երկու աշխատանքային խմբեր՝ գերիների փոխանակման և Սիրիայի Սահմանադրության փոփոխությունների մշակման համար: 2017 թվականին՝ չորրորդ հանդիպման ընթացքում, երաշխավոր երկրները հուշագիր են ստորագրում Սիրիայի Արաբական Հանրապետությունում դեէսկալացիայի գոտիներ ստեղծելու մասին: 2017 թվականին՝ վեցերորդ հանդիպման ժամանակ, Թուրքիան, Ռուսաստանը և Իրանը ստեղծում են համատեղ համակարգող կենտրոն՝ վերահսկելու դեէսկալացիան մշտադիտարկող ուժերի գործողությունները:[20]

Այսպիսով, Թուրքիային հաջողվում է որոշ չափով լեգիտիմացնել իր զինված ուժերի ներկայությունը Սիրիայում: Ավելին, ստեղծված հանձնախմբերն ու համաձայնագրերը ավելի են մեծացնում Թուրքիայի դերը Սիրիայում և տարածաշրջանում: Գոյություն ունի տեսակետ, ըստ որի՝ Աստանայի ձևաչափը դարձել է Ռուսաստանի և Իրանի նկատմամբ Թուրքիայի միջպետական կապերի

[18] Rabinovich, I. (2017). The Syrian civil war as a global crisis 1. Sfera Politicii, 25(1/2), 44-84, https://www.proquest.com/openview/2d83b83937e3fb4be89d634a5e73af8a/1?pq-origsite=gscholar&cbl=1036371 (այցելվել է 14.11.2022թ.)

[19] Ministry of Foreign Affairs. Syrian Peace Talks in Astana. (n.d.). Retrieved October 28, 2022, from https://archive.mid.ru/en/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4922767 (այցելվել է 14.11.2022թ.)

[20] Sergey V. Kostelyanets (2019) Russia's Peace Initiatives in the MENA Region: Evaluation and Prospects, Asian Journal of Middle Eastern and Islamic Studies, 13:4, 534-555, https://www.tandfonline.com/doi/full/10.1080/25765949.2019.1682302 (այցելվել է 14.11.2022թ.)

համագործակցության և զարգացման ևս մեկ հարթակ:[21] Մասնավորապես, Աստանայի ձևաչափը բանակցությունների ևս մեկ հիմք է ստեղծում, որը Թուրքիան կարող է օգտագործել այս երկրների հետ հարաբերություններում: Դրա մասին է վկայում այն, որ 2022 թ.հուլիսի 19-ին կայացած Պուտին-Էրդողան-Խամենեի հանդիպման ընթացքում թուրքական կողմը հնարավորություն է ունեցել բանակցել ռուսական կողմի հետ Ուկրաինայում ընթացող ռազմական գործողությունների արդյունքում պարենի արտահանման բլոկադայի ապաշրջափակման շուրջ:[22]

Սիրիայում Թուրքիայի ներկայությունը, որն ուղեկցվում է ռազմական ակտիվությամբ, դիվանագիտական միջնորդության միջոցով ռազմաքաղաքական նպատակներն իրականացնելու վառ օրինակներից է: Սիրիայի օրինակից բխում է, որ որոշակի թվացյալ փոխզիջումներ անելով միջնորդության մասնակից այլ ուժերին, Թուրքիան փոխարենը ստանում է լեգիտիմացում և այդպիսով ավելի է ամրացնում իր դիրքերը այս համատեքստում: Համադրելով Սիրիայում տեղի ունեցած իրողությունները Հարավային Կովկասի իրադարձությունների հետ՝ կարելի է նմանություններ գտնել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից առաջարկված «3+3» ձևաչափի հետ: Ըստ Թուրքիայի՝ սա հնարավորություն կստեղծի տարածաշրջանի երկրների միջև հարցերի շուրջ ավելի տրամաբանական փոխգործակցության, քանի որ դուրս կմղի մի շարք այլ գլոբալ ուժերի խիստ տարածաշրջանային բնույթ կրող խնդիրներից՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով այս երկրների պետական առաջնահերթություններին:[23]

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այս ձևաչափը իր հեռանկարում պարունակում է մի շարք լրջագույն խնդիրներ Հայաստանի և Արցախի համար: Մասնավորապես, սա հնարավորություն կտա Թուրքիային և Ադրբեջանին աշխատել լեգիտիմ ձևաչափի շրջանակներում և առաջ մղել թուրք-ադրբեջանական օրակարգը այն պայմաններում, երբ Հայաստանը կարող է չունենալ համաչափ աջակցություն մեկ այլ տարածաշրջանային ուժի կողմից: Այստեղ Հայաստանը կհայտնվի դիվանագիտական ռեսուրսների անհամեմատ սղության մեջ՝ համեմատած թուրք-

[21] Cengiz, S. (2020). Assessing the Astana Peace Process for Syria: Actors, Approaches, and Differences. Contemporary Review of the Middle East, 7(2), 200–214. https://doi.org/10.1177/2347798920901876 (այցելվել է 14.11.2022թ.)
[22] Plummer, R. (2022, July 19). Ukraine round-up: Putin's trip and Ukraine purge. BBC News. Retrieved October 27, 2022, from https://www.bbc.com/news/world-europe-62221358 (այցելվել է 14.11.2022թ.)
[23] Предложенный Турцией формат "3 + 3" не сработает. Александр Искандарян. armenpress.am. (n.d.). Retrieved November 10, 2022, from https://armenpress.am/rus/news/1067488.html (այցելվել է 14.11.2022թ.)

ադրբեջանական դիվանագիտական և ռազմական պոտենցիալին՝ ուղղված տարածաշրջանային խնդիրները հօգուտ իրենց լուծելու նպատակին:

2.2. Լիբիա. մարշալ Հավթարի և կառավարության միջև միջնորդության փորձերը

Ըստ Մենսի՝ Թուրքիան ձգտում է ստեղծել իր ազդեցության գոտին Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում, ձևավորելով պայմաններ՝ տնտեսական և ռազմական լծակների ստեղծման համար: Այն չի ձգտում ուղղակի վերահսկողություն իրականացնել արաբական երկրների վրա, բայց նպատակ ունի վաստակել քաղաքական դերակատարների և տեղական ղեկավարների հավատարմությունը և ուղիղ կախումը Թուրքիայից՝ պետության երկարաժամկետ նպատակներին ծառայեցնելու համար: Թուրքիայի տարածաշրջանային ազդեցությունը Լիբիայում այս ռազմավարության հիմնական բաղադրիչներից է: Այստեղ կենտրոնական կառավարության բացակայությունը և ներքաղաքական բաժանումները Թուրքիային տալիս են գործելու շարժառիթներ և բացում են հնարավորության պատուհան՝ ընդլայնելու էրդողանյան վարչակարգի ազդեցությունը տարածաշրջանում:[24]

Մենսը նաև գրում է, որ Թուրքիայի ներկայությունը Լիբիայում գլխավորապես պայմանավորված է նպաստավոր աշխարհագրական դիրքով, էներգետիկ ռեսուրսների առկայության և այլ՝ Թուրքիայի պետական շահի առաջմղման համար անհրաժեշտ հանգամանքներով: Ըստ BBC-ի վերլուծականի՝ Լիբիան ունի նավթի և գազի ամենամեծ պաշարները Աֆրիկայում: Ռազմավարական առումով այն գտնվում է Եվրոպայի հակառակ կողմում, և նրա ածխաջրածնային ռեսուրսները կարող են հեշտորեն արտահանվել արևմուտքի շուկաներ Միջերկրական ծովով:[25]

Չնայած այլ ուժերի ներկայությանը՝ Լիբիայում գերակշիռ դեր են կատարում թուրքական և ռուսական գործոնները: Սատարելով քաղաքացիական պատերազմի հակադիր կողմերի՝ Թուրքիան և Ռուսաստանը ունեցել են շահերի բախում, սակայն ըստ Մենսի եկել են ընդհանուր փոխզիջումային տարբերակի այն բանից հետո, երբ Թուրքիայի աջակցությամբ հաջողվել է մի շարք տարածքներից դուրս մղել Մարշալ Հաֆթարի ուժերին, որոնց տրամադրվելիք ռուսական օգնությունը, այդ պահի դրությամբ, պակասել էր: Ազատելով Տրիպոլին Հաֆթարի ուժերից՝ Թուրքիային

[24] Jay Mens (2022) Blue homelands and red strongholds: The Libyan Civil War in Turkish and Russian strategy, Comparative Strategy, https://www.tandfonline.com/doi/full/10.1080/01495933.2022.2087425 (այցելվել է 14.11.2022թ.)
[25] Bowen, J. (2020, May 31). Libya conflict: Russia and Turkey risk Syria repeat. BBC News. Retrieved November 9, 2022, from https://www.bbc.com/news/world-africa-52846879 (այցելվել է 14.11.2022թ.)

հաջողվում է վերականգնել Ֆայեզ ալ Սարրաժի ազդեցությունը այս տարածքում և մեծացնել իր դերը հակամարտության մեջ: Այնուհետև ստեղծվում է առաջարկ Հաֆթարի և Ֆայեզ ալ Սարրաժի միջև համաձայնության հասնելու համար, որտեղ Թուրքիան նույնպես միջնորդի կարգավիճակում է հանդես գալիս:

Հատկանշական է, որ Թուրքիան Լիբիայում իր միջնորդական դերի ստանձնման ճանապարհին չի խուսափել ուժի ավելի բացահայտ կիրառումից, ինչպես դա արել է այս հետազոտության մեջ բերված այլ օրինակներում: Ուժի կիրառմամբ կամ դրա սպառնալիքի արդյունքում ստանձնած միջնորդական դերը այլ երկրների միջև հակամարտության շրջանակներում հայտնի է ուժային միջնորդ (power mediator) եզրույթով:[26] Այս եզրույթը հետազոտելիս, իր աշխատության մեջ, Բերիկերը գրում է, որ ուժային միջնորդի կարգավիճակը հիմնականում առաջանում է հակամարտող պետություններից ավելի թույլ դիրքում գտնվող կողմի նկատմամբ, և հաճախ ճանապարհ է բացում տվյալ երկրի քաղաքական ղեկավարության վրա ազդեցություն ունենալու համար՝ թե՛ պատերազմի, թե՛ հետպատերազմյան փուլերում:[27]

Էրդողանյան վարչակարգի նպատակները բնականաբար տարբերվում են ըստ տարածաշրջանի և այդ տարածաշրջանում թուրքական շահի: Այդ հակամարտություններում միջնորդի դերի ստանձնման, Թուրքիայի կառավարության կողմից բերվող հիմնավորումները հիմնականում կրում են չեզոք բնույթ: Սակայն Լիբիայի դեպքում էրդողանյան օրակարգը տեղավորվում է «Մավի Վաթան» (Mavi Vatan) կոչվող դոկտրինայի տրամաբանության սահմաններում՝ հնարավորություն տալով ավելի հեշտորեն պարզելու Թուրքիայի իրական շահը Լիբիայում:[28] Թարգմանաբար «Կապույտ Հայրենիք» կոչվող այս դոկտրինայում առանձնահատուկ կարևորություն է տրվում միջերկրածովյան ռեսուրսներին և վերջինիս կարևոր աշխարհագրական դիրքին: Ըստ այս դոկտրինի՝ Թուրքիան ազգային անվտանգության և պետության հզորացման կարևոր բաղադրիչ է համարում այս տարածքում Թուրքիայի ռազմածովային ուժերի ներկայությունը և ռազմական առումով Միջերկրական ծովում դիրքերի ամրապնդումը:

---

[26] Stern, P. C., & Druckman, D. (2000). International conflict resolution after the Cold War. National Academy Press.

[27] Sandole, D.J.D., Byrne, S., Sandole-Staroste, I., & Senehi, J. (2008). Handbook of Conflict Analysis and Resolution (1st ed.). Routledge. https://doi.org/10.4324/9780203893166 (այցելվել է 14.11.2022թ.)

[28] Jay Mens (2022) Blue homelands and red strongholds: The Libyan Civil War in Turkish and Russian strategy, Comparative Strategy, 41:4, 370-387, DOI: 10.1080/01495933.2022.2087425

2.3. Իսրայելի ու Պաղեստինի միջև մանևրելու և միջնորդության փորձերը

Իսրայելա-պաղեստինյան հակամարտության շրջանակներում Թուրքիայի դերակատարությանը վերաբերող հիմնական դիսկուրսը ծավալվում է այն խնդրի շուրջ, թե ինչպես է էրդողանյան վարչակարգը հավասարակշռում Պաղեստինի և Իսրայելի նկատմամբ իր հարաբերությունները: Էրդողանյան վարչակարգին նախորդող կառավարությունները ավելի պասիվ դիրքավորում ունեին այս երկրների նկատմամբ՝ հիմնականում հաշվի առնելով տարածաշրջանի գերզգայուն և պայթյունավտանգ բնույթը, հատկապես արաբա-իսրայելական պատերազմից հետո: Այդ առումով, ԱԶԿ-ն առաջինն էր, որ աննախադեպ դիվանագիտական ակտիվությամբ մոտեցավ իսրայելա-պաղեստինյան հակամարտության հարցին: Սակայն այս ակտիվությունն առավել մեղմ էր՝ համեմատած այլ տարածաշրջաններում Թուրքիայի արտաքին քաղաքականության ակտիվության հետ:

Հիմնական խնդիրը, որը մինչև օրս զսպում է Թուրքիայի ավելի մեծ ինտեգրումը այս հակամարտության մեջ, դա Թուրքիայի դիրքորոշումն է և, որոշ դեպքերում, Թուրքիայի նկատմամբ այլ պետությունների պատկերացումը՝ որպես ժամանակակից մահմեդական աշխարհի առաջնորդ երկրի: Ըստ Մենդերեսի՝ ցանկացած որոշում այս հակամարտության շրջանակներում, որը չի բխում պաղեստինյան կողմի շահերից, հաճախ բացասաբար է անդրադառնում Թուրքիայի հեղինակության վրա մահմեդական աշխարհի երկրների շրջանում և ռիսկի տակ է դնում այս երկրների նկատմամբ վերջինիս վստահությունը և ազդեցությունը:[29]

Թուրքական կողմը, իր պաշտոնական հռետորաբանության շրջանակներում, միանշանակ կողմնակից է «Երկու պետության լուծում» տարբերակին: Ըստ թուրքական ղեկավարության՝ սա համընկնում է Պաղեստինի շահերին, և Թուրքիան կշարունակի աջակցել Պաղեստինին մինչև այս լուծման իրականություն դառնալը: Ըստ Իսրայելական կողմի՝ Թուրքիայի այդ օժանդակությունը հիմնականում ուղղված է Պաղեստինյան Գազայի տարածքում գործող «Համաս» կազմակերպությանը, ինչին Իսրայելը դեմ է արտահայտվում՝ համարելով Համասը անօրինական և ոչ լեգիտիմ կառույց տարածաշրջանում: Հատկանշական է, որ Թուրքիան միանշանակ չի ժխտում այս համագործակցության իրականությունը՝ փոխարենը մեղադրելով Իսրայելին

[29] Menderes Çinar (2018) Turkey's 'Western' or 'Muslim' identity and the AKP's civilizational discourse, Turkish Studies, 19:2, 176-197, DOI: 10.1080/14683849.2017.1411199

հակամարտության սրման և Պաղեստինի նկատմամբ ագրեսիվ քաղաքականության համար:

Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ անկախ պաշտոնական հայտարարություններից, թուրք-իսրայելական հարաբերությունները կայուն զարգացման փուլում են: Թուրքիան դերակատարում է ունեցել կողմերի, հատկապես Համասի և Իսրայելի միջև տեղեկատվության և հաղորդագրությունների փոխանցման համար 2008 թվականի դեկտեմբերին Իսրայելի Գազայի գործողության ընթացքում հրադադարի վերաբերյալ բանակցությունների շրջանակներում: Որպես մոնիթորինգ իրականացնող կողմ՝ Թուրքիան նաև որոշակի դերակատարություն է ստանձնել հետախուզական և դիտորդական առաքելություններում: Թուրքիան ակտիվ էր Միտչելի հանձնաժողովում, որը գումարվել էր 2000 թվականին երկրորդ ինթիֆադայից հետո:[30] Թուրք-իսրայելական հարաբերությունների կայունացման մասին է վկայում է նաև այն, որ 2022 թվականի օգոստոսի 17-ին, Իսրայելի և Թուրքիայի արտգործնախարարությունները հայտարարում են, որ կվերականգնեն դիվանագիտական հարաբերությունները և կվերսկսեն դեսպանությունների աշխատանքները երկու պետություններում:[31]

Թուրքիայի միջնորդությունը այս հակամարտության շրջանակներում համեմատելի է վերջինիս ռուս-ուկրաինական հակամարտության մեջ Թուրքիայի դերակատարությանը: Ստեղծելով ռազմավարական նշանակության ոլորտներում համագործակցության առանցքներ երկու հակամարտող կողմերի հետ՝ Թուրքիան կարողանում է իր համար ստեղծել չեզոք կողմի ընկալում այս երկու պետությունների հարաբերություններում և չի վնասում իր հեղինակությունը հակամարտող ճամբարներից որևէ մեկում: Փոխարենը՝ Թուրքիային տրվում է խուսանավելու հնարավորություն՝ հակամարտության ցանկացած պահին իր քաղաքական վարքագիծը ըստ պահանջի վերադասավորելու համար:

[30] Meliha Altunisik. (2000). The Turkish-Israeli Rapprochement in the Post-Cold War Era. Middle Eastern Studies, 36(2), 172–191. http://www.jstor.org/stable/4284076

[31] France 24 (2022, August 17). Turkey, Israel to restore full diplomatic ties. France 24. Retrieved November 10, 2022, from https://www.france24.com/en/middle-east/20220817-turkey-israel-to-restore-full-diplomatic-ties (այցելվել է 14.11.2022թ.)

3. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Լինելով Հարավային Կովկասում կարևոր դերակատարներից մեկը և հաշվի առնելով Ադրբեջանի հետ առանձնաշնորհյալ հարաբերությունները՝ Թուրքիան դեռ 90-ականների սկզբից ակտիվ հետաքրքրություն է ցուցաբերել հայ-ադրբեջանական հարաբերությունների և Արցախյան հակամարտության նկատմամբ: Թուրքիան եղել է ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ, և այս կամ այն չափով միշտ էլ ներգրավված է եղել Արցախյան հակամարտությանն առնչվող հարցերում: Սակայն, եթե հակամարտության սկզբնական փուլում Թուրքիայի ինչպես ռազմական, այնպես էլ դիվանագիտական միջամտությունը ավելի սահմանափակ էր, ապա վերջին տարիներին իրավիճակը աստիճանաբար փոխվեց, իսկ 44-օրյա պատերազմից հետո Թուրքիան դարձավ հայ-ադրբեջանական հարաբերություններում և Արցախյան հիմնախնդրում կարևոր դերակատարներից մեկը՝ Աղդամում դիտորդական առաքելության ստեղծում, հայ-թուրքական հարաբերությունների շաղկապում հայ-ադրբեջանական «խաղաղության պայմանագրի» հետ և այլն:

3.1. Թուրքիայի դերը և անաչառ միջնորդության անհնարինությունը ԵԱՀԿ Մինսկի խմբում

ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում հիմնական հակասությունը թուրքական պետության գործողությունների և նրա ունեցած մանդատի մեջ է: Անկարայի ագրեսիվ կեցվածքը ինչպես 2016 թվականի Ապրիլյան պատերազմի, այնպես էլ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ, ինչպես նաև պատերազմին հաջորդող դրվագներում, ուղղակիորեն հակադրվում է Մինսկի խմբի անդամների պարտավորությանը՝ ձեռնպահ մնալ հակամարտության կարգավորման շրջանակներում ուժային միջոցներ կիրառելուց, ուժային միջոցների կիրառումը դատապարտել և հետապնդել հակամարտության դիվանագիտական լուծում :[32] Ադրբեջանի ղեկավարությունը և գործադիր ու օրենսդիր իշխանության տարբեր ներկայացուցիչներ չեն թաքցնում Թուրքիայի ակտիվ ներգրավվածությունը 44-օրյա պատերազմին: Նշվում է Թուրքիայի ռազմական և դիվանագիտական

[32] Conflict prevention and resolution. OSCE. (n.d.). Retrieved November 10, 2022, from https://www.osce.org/conflict-prevention-and-resolution (այցելվել է 14.11.2022թ.)

աջակցությունը, ինչպես նաև այս գործոնի մեծագույն դերը Ադրբեջանի հաղթանակի ապահովման գործում:[33]

Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորման միջնորդության նկատմամբ անաչառ մոտեցման անհնարինությունն ակնհայտ է նրանով, որ թուրքական կառավարությունը շարունակաբար վերահաստատում է այն պայմանը, ըստ որի՝ ադրբեջանական պահանջները պետք է առաջնահերթ լինեն և ամբողջությամբ բավարարվեն հայկական կողմից՝ առանց որևէ նկատառման հայկական կարմիր գծերի նկատմամբ:[34] Անաչառ միջնորդության անհնարինության ապացույց է նաև այսպես կոչված «Շուշիի հռչակագիրը», որը ուղիղ հավակնություններ է պարունակում Հայաստանի սուվերեն տարածքի նկատմամբ:[35] Առանձնահատուկ ուշադրություն են պահանջում հռչակագրում տեղ գտած, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» նկատմամբ թուրք-ադրբեջանական հավակնությունները:

Թուրք-ադրբեջանական համագործակցության շրջանակներում նույնպես նկատելի են ուժային միջնորդի և ավանդական միջնորդության հաստատման ռազմավարության մոտեցումները: Մասնավորապես, հունիսի 17-ին, Էրդողանը իր զեկույցում փորձ է անում արդարացնել միջանցքի տրամաբանությունը, կապելով վերջինիս «առավելությունները» այլ պետությունների շահերի հետ:[36] «Զանգեզուրի միջանցքի» նկատմամբ հավակնությունների շուրջ հնարավոր դաշնակիցների համախմբման փորձի ևս մեկ օրինակ կարելի է նկատել Սամարղանդում կայացած Թյուրքական պետությունների կազմակերպության գագաթնաժողովում

[33] BBC. (n.d.). Война дронов в карабахе: как беспилотники изменили конфликт между азербайджаном и арменией. BBC News Русская служба. Retrieved November 10, 2022, from https://www.bbc.com/russian/features-54431129 (այցելվել է 14.11.2022թ.)
[34] Civilnet. (2022, July 21). Turkey coordinating armenia normalization talks with Azerbaijan, foreign minister says. CIVILNET. Retrieved November 10, 2022, from https://www.civilnet.am/en/news/668900/turkey-coordinating-armenia-normalization-talks-with-azerbaijan-foreign-minister-says/ (այցելվել է 14.11.2022թ.)
[35] BBC. (n.d.). Президенты Эрдоган и алиев в Шуши подписали декларацию о союзничестве. BBC News Русская служба. Retrieved November 10, 2022, from https://www.bbc.com/russian/news-57481382 (այցելվել է 14.11.2022թ.)
[36] Эрдоган не видит со стороны россии намерений мешать созданию Зангезурского коридора - ТАСС. ТАСС. (n.d.). Retrieved November 10, 2022, from https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/11677669(այցելվել է 14.11.2022թ.)

ներկայացված հռետորաբանության մեջ:[37] Մասնավորապես, Էրդողանը փորձել է ընդգծել «Զանգեզուրի միջանցք» նախագծի կարևորությունը՝ այն կապելով միջոցառմանը մասնակից պետությունների ազգային նպատակների հետ, բացատրելով, որ սա հնարավորություն կտա ավելի արդյունավետ կապ հաստատել կազմակերպության մասնակից պետությունների միջև: Էրդողանը նաև նշել է, որ ակտիվ մասնակցություն է ունեցել Արցախի օկուպացված տարածքներում կատարվող աշխատանքների տարբեր փուլերին՝ ինչպես դիվանագիտական առումով, այնպես էլ որպես պետություն, որը մեծ ներդրումներ է կատարում ճանապարհաշինական, ենթակառուցվածքային և Ադրբեջանի կառավարության կողմից իրականացվող այլ նախագծերում:

Տնտեսական համագործակցության կազմակերպության գագաթնաժողովի շրջանակներում Էրդողանը ավելի բաց է խոսում իր երկրի և Ադրբեջանի պատրաստակամության մասին՝ ուժային միջոցով Հայաստանի տարածքով անցնող միջանցքը բացելու վերաբերյալ:[38] Վերադառնալով նախորդ գլխում նշված «3+3» ձևաչափի մասին քննարկմանը՝ կարելի է ենթադրել, որ վերջինս «Զանգեզուրի միջանցքի», ինչպես նաև այլ տարածքային հավակնությունների հարցը հօգուտ թուրք-ադրբեջանական տանդեմի լուծելու համար նպաստավոր դիվանագիտական հարթակ ստեղծելուն ուղղված տրամաբանական միջոցներից մեկն է: Այսպիսով կարելի է հանգել այն եզրակացությանը, որ Թուրքիան այլևս չի թաքցնում իր՝ ոչ անաչառ մոտեցումը, սակայն շարունակում է հանդես գալ միջնորդի անվան տակ, փորձ կատարելով ավելի լեգիտիմացնել իր տարածքային հավակնությունները տարածաշրջանում:

3.2. Ռիսկերը՝ կապված Արցախյան և հայ-ադրբեջանական սահմանային հակամարտության շրջանակներում Թուրքիայի «ուժային միջնորդության» հեռանկարի հետ

Արցախի և Հայաստանի նկատմամբ Թուրքիայի միջնորդական ռազմավարությունը միանշանակ չէ: Հաշվի առնելով հետազոտության մեջ բերված օրինակները՝ արդիական է այս միջնորդության պոտենցիալ վերափոխման երկու

[37] Кирил Кривошеев(2022, November 11). Тюркский мир расширяется, Организация [37] Тюркских Государств. Коммерсантъ. Retrieved November 13, 2022, from https://www.kommersant.ru/doc/5666364 (այցելվել է 14.11.2022թ.)

[38] Arminfo: Эрдоган и алиев продолжают проталкивать идею так называемого Зангезурского коридора на международных площадках. Arminfo.info. (n.d.). Retrieved November 10, 2022, from https://arminfo.info/full_news.php?id=66411&lang=2 (այցելվել է 14.11.2022թ.)

հեռանկարային տարբերակ: Մասնավորապես, կարելի է ենթադրել, որ Թուրքիան կորդեգրի հետևյալ ռազմավարություններից որևէ մեկը. ռազմական ակտիվության միջոցով ուժային միջնորդի դերի հաստատում կամ փափուկ ուժի միջոցով ավելի ավանդական միջնորդության իրականացում: Չնայած երկու տարբերակների ակնհայտ վտանգներին, թուրքական փափուկ ուժի հաստատումը և դրա խորացումը Հայաստանում մեծ հավանականությամբ Թուրքիային հնարավորություն կտա լեգիտիմացնելու իր միջնորդությունը տարածաշրջանում և հայ-ադրբեջանական օրակարգի շրջանակներում: Ավելին, փափուկ ուժի ներթափանցումը Հայաստանի ռազմավարական նշանակության ոլորտներ, ինչպիսիք են, օրինակ, էկոնոմիկան կամ առևտուրը, անկասկած կստեղծի կախում, որը խիստ վտանգավոր է՝ հաշվի առնելով ներկայիս թուրք-ադրբեջանական հավակնությունները տարածաշրջանում:

Միջազգային փորձագիտական շրջանակները հանգում են այն եզրակացությանը, որ իր մասնակցությամբ Թուրքիային հաջողվել է ստանալ տարածաշրջանում իր ազդեցության ներկայության երկարատև երաշխիքներ, նվազագույնը՝ Ադրբեջանի տարածքում ռազմական և դիվանագիտական ավելի ակտիվ ներկայության միջոցով:[39] Մասնավորապես, Թուրքիայի դերը գնալով ավելի է ամրապնդվում տարածաշրջանում Ադրբեջանի հետ մի շարք ծրագրերի իրագործման միջոցով: Օրինակ 2020 թվականին երկրները կնքել են փոխգործունեության համաձայնագրեր ագրոարդյունաբերության ոլորտում՝ Արցախի Հանրապետության օկուպացված տարածքներում:[40] Հետպատերազմյան շրջանում Ադրբեջանի և Թուրքիայի միջև այսպիսի սերտ համագործակցության մեկ այլ օրինակ է օկուպացված Վարանդայի շրջանում ադրբեջանական օդանավակայանի բացման համատեղ արարողությունը:[41] Միջոցառման ընթացքում Էրդողանը շեշտել է օդանավակայանի ռազմավարական կարևոր նշանակությունը Ադրբեջանի և Թուրքիայի համար: Թուրքիան ակտիվորեն ներգրավված է Արցախի օկուպացված տարածքներում բազմաթիվ ճանապարհների և ենթակառուցվածքների շինարարության գործում: Եվ վերջապես, Հարավային Կովկասում Թուրքիայի

[39] Agnieszka Miarka (2021) The 2020 Autumn War in Nagorno Karabakh: Course and implications for strategic balance of power in the South Caucasus region, Asian Affairs, 52:4, 826-851, DOI: 10.1080/03068374.2021.1993050

[40] Азербайджан и Турция укрепляют узы посредством выгодных контрактов в карабахе. Eurasianet. (n.d.). Retrieved November 10, 2022, from https://russian.eurasianet.org/азербайджан-и-турция-укрепляют-узы-посредством-выгодных-контрактов-в-карабахе (այցելվել է 14.11.2022թ.)

[41] Алиев и Эрдоган ввели в действие Физулинский международный аэропорт в Карабахе - ТАСС. ТАСС. (n.d.). Retrieved November 10, 2022, from https://tass.ru/ekonomika/12765035 (այցելվել է 14.11.2022թ.)

դիրքերի ամրապնդման ամենացցուն օրինակն է 2021թ. հունիսին օկուպացված Շուշիում ստորագրված հռչակագիրը, որով թուրք-ադրբեջանական հարաբերությունները պաշտոնապես բերվեցին նոր մակարդակի:

Թուրքիայի «ուժային միջնորդության» քաղաքականության համար կարող են պարարտ հող ստեղծել այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» շուրջ հայ-ադրբեջանական հակասությունները: Առայժմ, հաշվի առնելով նաև այս հարցի շրջանակներում այլ դերակատարների՝ ՌԴ, ԱՄՆ, ԵՄ ակտիվ ներգրավվածությունը, Թուրքիայի դիվանագիտական ջանքերը սահմանափակվում են Ադրբեջանին անվերապահ աջակցությամբ: Սակայն, հաշվի առնելով հարցի ոչ հայանպաստ լուծման հարցում Անկարայի ակնհայտ շահագրգռվածությունը, ինչպես նաև տարածաշրջանում մյուս դերակատարների դիրքերի թուլացման միտումը, Թուրքիան կարող է այս հարցում ակտիվացնել իր միջնորդական ջանքերը՝ ինչպես ուժային, այնպես էլ դիվանագիտական բաղադրիչների կիրառմամբ:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեև կարևոր է ընդգծել սույն հետազոտության մեջ նշված երկրներում միջնորդության ռազմավարության ավելի խոր վերլուծության անհրաժեշտությունը, այս պահին հնարավոր է որոշակի եզրակացությունների գալ Թուրքիայի միջնորդության քաղաքականության վերաբերյալ: Թուրքիան, լինելով զարգացող տարածաշրջանային տերություն, ունի իր դիվանագիտական ռեսուրսներն այլ պետություններից իր նկատմամբ կախվածություն ստեղծելու համար օգտագործելու փորձ: Դրանով Էրդողանի ռեժիմը տարածաշրջանում խաղաղ միջնորդի քողի տակ հաջողությամբ ինտեգրվում է այս պետությունների ներքին և արտաքին գործերի մեջ: Չնայած հաճախ հանդիպող չեզոք հռետորաբանությանը՝ Թուրքիայի իրական շահերը կարելի է հասկանալ իր իռեդենտիստ գործողություններով, «Մավի Վաթան» դոկտորինով[42] և մի շարք համաձայնագրերով[43]: Այսօրվա Թուրքիայի համար առաջնահերթություն է միայն թուրքական և էրդողանյան շահը, ինչն իրենից չի ենթադրում համագործակցություն և փոխզիջում ավելի անբարենպաստ պայմաններում գտնող պետությունների հետ՝ տևական խաղաղության և զարգացման

[42] Jay Mens (2022) Blue homelands and red strongholds: The Libyan Civil War in Turkish and Russian strategy, Comparative Strategy, 41:4, 370-387, DOI: 10.1080/01495933.2022.2087425

[43] Азербайджан и Турция укрепляют узы посредством выгодных контрактов в карабахе. Eurasianet. (n.d.). Retrieved November 10, 2022, from https://russian.eurasianet.org/азербайджан-и-турция-укрепляют-узы-посредством-выгодных-контрактов-в-карабахе (այցելվել է 14.11.2022թ.)

հիմքեր հաստատելու համար: Այս պայմաններում խիստ կարևոր է Հայաստանի և Արցախի սթափ գիտակցումը Թուրքիայի անաչառ միջնորդության անհնարինության և այն վտանգի, որն իր հետ կբերի թուրքական գործոնի լեգիտիմացումը և ամրապնդումը տարածաշրջանում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*